Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
ապրիլի 25-ի N 472 -Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԳՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության, դրանց հիման վրա շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգի հետ կապված հարաբերությունները:

## II. ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2. Պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների (այսուհետ՝ նյութեր) գների ուսումնասիրության կազմակերպումը և իրականացումը կազմված է հետևյալ փուլերից՝

1) ուսումնասիրման ենթակա նյութերի ցանկի հստակեցում.

2) նյութերի նույնականացման չափանիշների ձևավորում.

3) նյութերի գների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող ընկերությունների շրջանակի սահմանում.

4) նյութերի գների հավաքագրում, հաշվառում և հրապարակում.

5) վերլուծությունների իրականացում:

3. Հրապարակման ենթակա նյութերի ցանկը (այսուհետ՝ ցանկ), որոնց գներն ուսումնասիրվում են «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից և հրապարակվում են կազմակերպության կողմից ձևին համապատասխան հրատարակվող «Ինֆորմացիոն տեղեկագրում» (այսուհետ՝ ինֆորմացիոն տեղեկագիր), սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը՝ համաձայնեցնելով շահագրգիռ մարմիններ հետ:

4. Ցանկում փոփոխությունները կատարվում են ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով շուկայում նյութերի նոր տեսակների առկայությունը և այլ նյութերի կիրառման կամ կիրառությունից հանելու անհրաժեշտությունը:

5. Պետական մարմինները, ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կարող են կազմակերպություն ներկայացնել ցանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություն, որտեղ նշվում են նյութերի կիրառման ոլորտը, ակնկալվող արդյունքը կամ կիրառությունից հանելու հիմնավորումը:

6. Կազմակերպության կողմից ուսումնասիրվում է ներկայացված առաջարկությունը՝ անհրաժեշտության դեպքում առաջարկելով ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն և, նպատակահարմարության դեպքում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնում է առաջարկություն ցանկում սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

7. Ինֆորմացիոն տեղեկագրում ներառվում են միայն չօգտագործված նյութերի գները, սակայն եթե նորմատիվ իրավական ակտով թույլատրված է կիրառել նաև օգտագործված,

սակայն հետագա օգտագործման համար պիտանի նյութեր, ապա դրանց գները կարող են ներառվել ցանկում: Օգտագործված նյութերի գները ներառվելու դեպքում ցանկում կատարվում է նշում նյութի օգտագործված լինելու մասին:

8. Ստացված տեղեկատվությունն ստանալուց հետո նյութերի գները կազմակերպության կողմից սույն կարգին համապատասխան ամփոփվում և ներառվում են ինֆորմացիոն տեղեկագրում, որը հրապարակվում է մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

## III. ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԳՆԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

9. Նույնական նյութերի յուրաքանչյուր տեսակի գինը որոշվում է դրա վերաբերյալ հավաքագրված գների հիման վրա հետևյալ բանաձևով՝

$$Գն = (Գ1+ Գ2+ ....+Գn) / n$$

որտեղ,

Գն-ն նյութի նախահաշվային գինն է՝ առանց ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ),

Գ1...n-ն նյութի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներից ստացված գինն է՝ առանց ԱԱՀ-ի,

n-ն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 26-ի N 740-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան ստացված տեղեկատվության աղբյուրների քանակն է:

10. Նյութի գինը հաշվարկելիս հիմք են ընդունվում դրա վերաբերյալ ստացված գները՝ սկսած նվազագույնից: Նյութի գործող գնի հաշվարկի համար հիմք են ընդունվում սահմանված կարգով հավաքագրված նվազագույն գնի նկատմամբ 15 տոկոսը չգերազանցող այլ աղբյուրներից ստացված գները:

11. Եթե նյութի գինը տրամադրվել է ԱԱՀ չվճարող տնտեսավարող սուբյեկտի կողմից, կամ սահմանված կարգով շուկան ուսումնասիրելիս հայտնի չէ տնտեսավարող սուբյեկտի ԱԱՀ վճարող լինելու հանգամանքը, ապա սույն կարգի 9-րդ կետով սահմանված հաշվարկն իրականացնելիս այդ նյութի գինը պակասեցվում է ԱԱՀ-ի չափով:

12. Նույնական են համարվում այն նյութերը, որոնք ունեն միևնույն տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանը, ծագման երկիրը:

13. Յուրաքանչյուր նյութի գինը որոշվում է համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում տեղեկատվության առնվազն տեղեկատվության երեք աղբյուրներից ստացված գների հիման վրա՝ բացառությամբ 14-րդ կետով նախատեսված դեպքերի:

14. Նյութի գինը կարող է որոշվել տեղեկատվության մեկ աղբյուրի հիման վրա ոչ նույնական նյութերի դեպքերում, ինչպես նաև, երբ ապրանքային շուկայում տվյալ նյութի արտադրմամբ, ներմուծմամբ կամ արդյունահանմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտը, օրենքով սահմանված կարգով, համարվում է շուկայում մենաշնորհի դիրք ունեցող կամ, տվյալ նյութի գնի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել է այն արտադրող (արդյունահանող) կամ վերջինիս ներկայացուցիչ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտը:

15. Ոչ նույնական նյութերի դեպքում ինֆորմացիոն տեղեկագրում ներառվում են նաև տվյալ նյութին բնորոշ առանձնահատկությունները (տեխնիկական հատկանիշները, ապրանքային նշանը, ծագման երկիրը և այլն):

16. Տեխնիկական հատկանիշների, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից տրամադրված գրավոր կամ բանավոր տեղեկատվության հիման վրա և կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում դրանց ճշտության համար:

17. Տեղեկագրում նյութերի գները նշվում են առանց ԱԱՀ-ի:

18. Տեղեկագրում հրապարակված նյութերի գները հիմք են ընդունվում պետական կարիքների համար իրականացվող շինարարական աշխատանքների արժեքի նախա-հաշիվների կազմման համար:

19. Նախահաշիվ կազմելիս գործող գների հիմք են ծառայում տվյալ պահի դրությամբ հրապարակված առկա վերջին տեղեկագիրը:

20. Ինֆորմացիոն տեղեկագրում որևէ նյութի վերաբերյալ տվյալների բացակայության դեպքում՝

1) գործող գների հիմք են ծառայում շուկայի ուսումնասիրության արդյունքում արձանագրված տվյալները և գները հիմնավորող փաստաթղթերը, եթե տվյալ շինարարական աշխատանքների նախահաշվային ընդհանուր արժեքը չի գերազանցում 200.0 մլն դրամը.

2) շինարարական աշխատանքների նախահաշվային ընդհանուր արժեքը 200.0 մլն դրամը գերազանցելու դեպքում գործող գների հիմք են ծառայում շուկայի ուսումնասիրության արդյունքում արձանագրված տվյալները և գները հիմնավորող փաստաթղթերը, եթե տվյալ նյութի ընդհանուր արժեքը չի գերազանցում նախահաշվային ընդհանուր արժեքի նկատմամբ աղյուսակով ներկայացված սահմանաչափերը:

Օբյեկտի նախահաշվային ընդհանուր արժեքի նկատմամբ
կիրառվող սահմանաչափերը

Աղյուսակ

| | Կառույցի տեսակը | Օբյեկտի նախահաշվային արժեքի նկատմամբ կիրառվող սահմանաչափերը՝ տոկոսներով (նորակառույց/վերակառուցվող, հիմնանորոգվող, ամրացվող) |
|---|---|---|
| I. | Երկփուլ նախագծով՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով նախագծվող օբյեկտներ | |
| 1. | *Հատուկ նախագծերով իրականացվող* | |
| 1) | - լեռնահարստացման, գունավոր մետալուրգիայի և քիմիական արտադրության կազմակերպություններ, հիդրոէլեկտրակայաններ, ատոմային | 10/12 |

| | | |
|---|---|---|
| | էլեկտրակայաններ, մետրոպոլիտեն, թունելներ, խոշոր կամուրջներ, ինչպես նաև կամուրջներ ե/բետոնյա թռիչքային շինվածքներով ավելի քան 80 մ երկար. և մետաղական թռիչքային շինվածքներով ավելի քան 100 մ երկար., արտառոց՝ տեխնիկապես բարդ լուծումներով շենքեր և շինություններ | |
| 2) | - մետալուրգիայի և քիմիական գործարաններ, նավթարտադրության, գազարտադրության (հարստացման) գործարաններ, մանրէաբանական արտադրության կազմակերպություններ, մելիորատիվ շինարարության օբյեկտներ, ծովային հիդրոտեխնիկական կառույցներ | 7/8 |
| 3) | - արտադրական և գյուղատնտեսական բնույթի այլ կազմակերպությունների շենքեր ու շինություններ, տրանսպորտի և կապի, հասարակական նշանակության շենքեր ու շինություններ (բացի բնակելի շենքերից) | 5/6 |
| 4) | - բնակելի շենքեր | 3/4 |
| 2. | *Տիպային և կրկնակի կիրառման (հատուկ) նախագծերով իրականացվող շինարարության օբյեկտներ* | |
| 1) | - հասարակական նշանակության շենքեր և շինություններ, բնակելի շենքեր | 2/3 |
| 2) | - արտադրական նշանակության օբյեկտներ | 3/4 |
| II. | <u>Մեկ՝ «Աշխատանքային նախագիծ» փուլով նախագծվող օբյեկտներ</u> | |
| 3. | *Տիպային և կրկնակի կիրառման նախագծերով իրականացվող* | |
| 1) | - արտադրական շենքեր և շինություններ, ինչպես նաև նոր (հատուկ) նախագծերով իրականացվող բնակելի շենքեր | 3/4 |
| 4. | *Հատուկ նախագծերով իրականացվող* | |
| 1) | - հասարակական շենքեր և շինություններ | 5/6 |
| 5. | *Տիպային և կրկնվող նախագծերով իրականացվող* | |
| 1) | - հասարակական շենքեր և շինություններ, բնակելի շենքեր | 2/3 |
| 2) | - արտադրական այն օբյեկտների համար, որոնք չեն նախատեսվել սույն աղյուսակի 1-ին կետի 1-ին ենթակետով (10/12 %-ին) կիրառվում է 0.5 գործակիցը (բայց ոչ պակաս, քան 3% շինարարության կամ հիմնանորոգման նախահաշվային արժեքից) | 3-5 (3-6) |

| | | |
|---|---|---|
| III. | Հատուկ նշանակության օբյեկտներ՝ պաշտպանական և ռազմական նշանակության շենքեր և շինություններ (Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N 812 որոշում) | 6/7 |
| IV. | ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության աշխատակազմերի հաշվեկշիռներում գտնվող շենքեր, շինություններ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 63-Ն որոշում) | 5/6 |

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետով սահմանված պահանջները չբավարարելու դեպքում կազմակերպությանն ուղղված գրավոր դիմումի հիման վրա, 10 աշխատանքային օրվա ընթացքում, գործող գները սահմանում է կազմակերպությունը՝ սույն որոշմամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

21. Կազմակերպության կողմից սույն կարգի 20-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ծառայության արժեքի ձևավորման մեթոդաբանությունը և ծառայության արժեքը սահմանվում է լիազոր մարմնի ղեկավարի կողմից:

22. Սույն կարգի 20-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում կազմակերպության կողմից որևէ նյութի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի համաձայնությամբ սույն կարգի 20-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված գործընթացի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին ծանուցվում է դիմողը և այդ դեպքում նախահաշիվ կազմելիս որպես գործող գին հանդիսանում են պատվիրատուի կողմից շուկայում արձանագրված գները՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

23. Կազմակերպության կողմից որևէ նյութի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրման անհնարինության այլ դեպքերում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի համաձայնությամբ որպես գործող գին հանդիսանում են պատվիրատուի կողմից շուկայում արձանագրված գները՝ համապատասխան հիմնավորող

փաստաթղթերի հիման վրա, որի մասին տեղեկագրում կատարվում է համապատասխան նշում:

## IV. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Յուրաքանչյուր ամիս կազմակերպության կողմից հաշվարկվում են շինարարության ոլորտում գների հետևյալ ինդեքսները՝

1) նյութերի, ռեսուրսների արժեքի փոփոխման ինդեքսը.

2) աշխատավարձի մոտավոր միջինացված ինդեքսը.

3) մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի գործակիցը.

4) շինմոնտաժային աշխատանքների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսը.

5) կապիտալ ներդրումների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսը:

25. Նյութերի, ռեսուրսների արժեքի փոփոխման ինդեքսը հաշվարկում է հետևյալ բանաձևով՝

$$Ն_{ին} = (∑(Ն_{կ} X Ն_{մգ\ հաշվետու}) / (∑(Ն_{կ} X Ն_{մգ\ բազիս})) x Ծ_{տեղ} x Պ_{մ}$$

որտեղ՝

$Ն_{ին..}$-ն նյութերի, ռեսուրսների արժեքի փոփոխման ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

$Ն_{կ}$-ն ինդեքսի հաշվարկման համար ընտրված նյութերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռն է որոշակի արժեքի հաշվարկով,

$Ն_{մգ\ հաշվետու}$-ն շինանյութերի և պատրաստվածքների կողմնորոշիչ գներն են հաշվետու ժամանակաշրջանում,

$Ծ_{տեղ}$ -ն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տրանսպորտային ծախսերի միջին թվաբանականն է,

$Պ_մ$-ն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաթեթավորման-պահեստավորման ծախսեր են,

$Ն_{մգ\ բազիս}$-ն շինանյութերի և պատրաստվածքների կողմնորոշիչ գներն են բազիսային ժամանակաշրջանում:

26. Սույն կարգի 25-րդ կետում նշված ինդեքսի հաշվարկման համար ընտրված կապիտալ ծախսերի և հիմնանորոգման համար կիրառվող նյութերի ցանկը և դրանցից յուրաքանչյուրի տեսակի կշիռը որոշակի արժեքի հաշվարկով սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից՝ նախատեսելով կշիռների արդիականացում առնվազն հինգ տարին մեկ անգամ:

27. Շինմոնտաժային աշխատանքների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսը հաշվարկում է հետևյալ բանաձևով՝

$$Ի_{շմ}=(Ն_մ x Ն_{ին}+Ա_մ x Ա_{ին}+Մ_մ x Գ_{մեք.շահ}) x Ծ_{կ} x Ծ_2 /100$$

որտեղ՝

$Ի_{շմ}$-ն շինմոնտաժային աշխատանքների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսն է,

$Ն_մ$ –ն շինմոնտաժային աշխատանքների կառուցվածքում նյութերի ծախսերի մասնաչափն է, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից,

$Ն_{ին}$ -ն նյութերի արժեքի փոփոխման ինդեքսն է ,

$Ա_մ$-ն շինմոնտաժային աշխատանքների կառուցվածքում աշխատավարձի ծախսերի մասնաչափն է, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից,

$Ա_{ին}$ – ն շինարարության ոլորտում աշխատավարձի ինդեքսն է,

$Մ_մ$- ն շինմոնտաժային աշխատանքների կառուցվածքում մեքենաների և մեխանիզմի շահագործման ծախսերի մասնաչափն է, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից,

$Գ_{մեք շահ}$-ն մեքենաների և մեխանիզմների շահագործման ծախսերի գործակիցն է,

$Ծ_կ$-ն շինմոնտաժային աշխատանքների կառուցվածքում վերադիր ծախսերի մասնաչափն է,

$Ծ_շ$-ն շինմոնտաժային աշխատանքների կառուցվածքում շահույթի մասնաչափն է:

28. Կապիտալ ներդրումների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ի_{կն} = (Շ_մ \times Ի_{շմ} + Ն_մ \times Ն_{ին} + Ծ_մ \times Ծ_{այլ})/100$$

որտեղ՝

$Ի_{կն}$-ն կապիտալ ներդրումների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսն է,

$Շ_մ$-ն կապիտալ ներդրումների կառուցվածքում շինմոնտաժային աշխատանքների ծախսերի մասնաչափն է, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից,

$Ի_{շմ}$ – ն շինմոնտաժային աշխատանքների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսն է,

$Ն_մ$ -ն կապիտալ ներդրումների կառուցվածքում սարքավորումների (նյութերի) մասնաչափն է,

$Ն_{ին.}$ –ն նյութերի, ռեսուրսների արժեքի փոփոխման ինդեքսն է,

$Ծ_մ$-ն կապիտալ ներդրումների կառուցվածքում այլ ծախսերի մասնաչափն է,

$Ծ_{այլ}$ - ն տվյալ ամսվա համար այլ ծախսերի չափն է՝

$$Ծ_{այլ} = 0,64 \times Գ_{աշ} + 0,36 \times Ն_{ին}$$

0,64-այլ ծախսերի կառուցվածքում աշխատավարձի մասնաբաժինը,

0,36-այլ ծախսերի կառուցվածքում նյութերի մասնաբաժինը:

29. Աշխատավարձի ինդեքսը հաշվարկում է հետևյալ բանաձևով՝

$$Ա_{ին}=(Ա_{միջ.\ հաշվետու} / Ա_{միջ.\ բազիս})$$

$Ա_{ին}$ -ն շինարարության ոլորտում աշխատավարձի ինդեքսն է,

$Ա_{միջ.\ հաշվետու}$ -ն շինարարության ոլորտում հաշվետու ժամանակաշրջանի միջին աշխատավարձն է,

$Ա_{միջ.\ բազիս}$ -ն շինարարության ոլորտում բազիսային ժամանակաշրջանի միջին աշխատավարձն է:

30. Մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի գործակիցը հաշվարկում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի  Ձ Ե Վ

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԳԼԽԱԴԻՐԻ

| N N ը/կ | Շինանյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների անվանումը | Չափի միավորը | Տեխնիկական հատկանիշները (չափը, քաշը, խտությունը, գույնը, կամե-րաների քանակը և այլ) | Ապրանքային նշանը, ծագման երկիրը կամ արդյունահանման վայրը | Գինն առանց ավելացված արժեքի հարկի (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | | | | | |
| 2. | | | | | |
| ….. | | | | | |

4-րդ և 5-րդ սյունակներում ներառվող տեղեկատվությունը լրացվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից տրամադրված գրավոր կամ բանավոր տեղեկատվության հիման վրա և <<Գնագոյացման վերլուծական ինֆրմացիոն կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմա-կերպությունը պատասխանատվություն չի կրում դրանց ճշտության համար: